ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N11

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

28 հուլիսի 2022 թվականի
Արաքս համայնքի ավագանու թիվ 11 արտահերթ նիստ

2022 թվականի հուլիսի 28-ին ՀՀ Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղում կայացավ թիվ 11 արտահերթ նիստը: Նիստին մասնակցում էր ավագանու 12 անդամ: Նիստը վարում էր Արմավիրի մարզի Արաքս համայնքի ղեկավար Ղ. Ղազարյանը: Նիստին հրավիրված էին Արաքս համայնքի վարչական ղեկավարներ, համայնքի ղեկավարի խորհրդականներ, համայնքապետարանի աշխատակազմի անդամներ: Համայնքի ղեկավար Ղ. Ղազարյանը ներկայացրեց 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը և ընթացակարգը, որի համար հիմք է հանդիսանում «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասը և 65-րդ հոդվածը:
Օրակարգի հարցերն էին.

1. ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 3-Ի N 35-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 77-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԱԽԿԻՆ ՋՐԱՌԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 47-Ա ՈՉ ԻՐԱՎԱՉԱՓ ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 89-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՏԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՅԼ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

8. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 29-Ի N 87-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Զեկ.՝ Ղ. Ղազարյան

Օրակարգն ընդունվեց ավագանու ներկա բոլոր 12 անդամների կողմից:

Լսեցին 2 - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի մարտի 3-ի N35-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
Զեկուցեց – Արաքս համայնքի ղեկավար Ղ. Ղազարյանը, ելույթ ունեցավ Արաքսի համայնքապետարանի ֆինանսակտնտեսագիտակա, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար Ռ. Թեմուրյանը:
Որոշվեց - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի մարտի 3-ի N35-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել փոփոխություն: Որոշմանը կողմ քվեարկեցին ավագանու նիստին ներկա բոլոր 12 անդամները:

Լսեցին 3 - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման առաջին կիսամյակի հաղորդումը հաստատելու մասին.
Զեկուցեց – Արաքս համայնքի ղեկավար Ղ. Ղազարյանը, ելույթ ունեցավ Արաքսի համայնքապետարանի ֆինանսակտնտեսագիտակա, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետի պաշտոնակատար Ռ. Թեմուրյանը:
Որոշվեց – Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման առաջին կիսամյակի հաղորդումը՝ համաձայն հավելվածի: Որոշմանը կողմ քվեարկեցին ավագանու նիստին ներկա բոլոր 12 անդամները:

Լսեցին 4 - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի հունիսի 29-ի N77-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

Զեկուցեց – Արաքս համայնքի ղեկավար Ղ. Ղազարյանը, ելույթ ունեցավ Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մուրադյանը:
Որոշվեց – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի հունիսի 29-ի N77-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման առաջին կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն հավելվածի: Որոշմանը կողմ քվեարկեցին ավագանու նիստին ներկա բոլոր 12 անդամները:

Լսեցին 5 - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի նախկին Ջրառատ համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 24-ի N47-Ա ոչ իրավաչափ որոշումն անվավեր ճանաչելու մասին.
Զեկուցեց – Արաքս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վ. Հարությունյանը, Արաքս համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Ա.Մուրադյանը, ելույթ ունեցան ավագանու անդամներ Ա.Մանուկյանը, Ա.Աբասյանը, Հ.Մելքոնյանը, Մ.Մակարյանը: Որոշման ընդունման առնչությամբ կայացավ բուռն քննարկում ավագանու անդամների կողմից: Ավագանու անդամ Աննա Մանուկյանը ով եղել է նախկին Ջրառատ համայնքի ավագանու անդամ ներկայացրեց իր դիրքորոշումը և բացասական կարծիքը քննարկվող հարցի վերաբերյալ: Որոշման քննարկմանը ներկա էին ավագանու 10 անդամներ, քանի որ ավագանու 2 անդամներ՝ Ղ.Ղազարյանը և Գ.Մնացականյանը ունեին դիմումատու Լլուսինե Ղազարյանի հետ մերձավոր ազգակցական կապ:
Որոշվեց – Ավագանու մի քանի անդամների առաջարկությամբ որոշվեց սույն որոշման նախագծի վերաբերյալ հավելյալ քննարկում իրականացնել, այնուհետև գալ որևէ եզրահանգման:

Լսեցին 6 - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի հունիսի 29-ի N 89-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.
Զեկուցեց – Արաքս համայնքի ղեկավար Ղ.Ղազարյանը, ելույթ ունեցավ Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Ա. Քեշիշ-Ղուկասյանը: Որոշման քննարկման ժամանակ ավագանու երկու անդամներ Ս.Մարկոսյանը և Շ.Շահինյանը գտնվում էին քննարկման սենյակից դուրս: Որոշմանը կողմ քվեարկեցին ավագանու նիստին ներկա բոլոր 12 անդամները:
Որոշվեց – Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի 2022 թվականի հունիսի 29-ի N 89-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 2-րդ կետում նշված «0.03278» թվերը փոխարինել «0.033» թվերով:

Լսեցին 7 - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը աճուրդային կարգով օտարելու մասին.
Զեկուցեց – Արաքս համայնքի ղեկավար Ղ.Ղազարյանը, ելույթ ունեցավ Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Քեշիշ-Ղուկասյանը: Որոշման քննարկման ժամանակ ավագանու երկու անդամներ Ս.Մարկոսյանը և Շ.Շահինյանը գտնվում էին քննարկման սենյակից դուրս: Որոշմանը կողմ քվեարկեցին ավագանու նիստին ներկա բոլոր 12 անդամները:
Որոշվեց – 1. Թույլատրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի Առատաշեն գյուղի վարչական տարածքում գտնվող 04-013-0121-0101 կադաստրային ծածկագրով գյուղնշանակության 0.12 հա այլ հողատեսքը աճուրդային կարգով օտարել:

2. Աճուրդային կարգով օտարման մեկնարկային գին սահմանել 04-013-0121-0101 կադաստրային ծածկագրով գյուղնշանակության 0.12 հա վարելահողի համար 150.000 /մեկ

հարյուր հիսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ: Յուրաքանչյուր քայլը սահմանել մեկնարկային գնի 5%-ի չափով: Մասնակցության վճար սահմանել 10000/տաս հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, աճուրդն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

Լսեցին 8 - Հայաստանի Հանապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի N87-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին.

Զեկուցեց – Արաքս համայնքի ղեկավար Ղ.Ղազարյանը, ելույթ ունեցավ Արաքսի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի գլխավոր մասնագետի պաշտոնակատար Ա. Քեշիշ-Ղուկասյանը: Որոշման քննարկման ժամանակ ավագանու երկու անդամներ Ս.Մարկոսյանը և Շ.Շահինյանը գտնվում էին քննարկման սենյակից դուրս: Որոշմանը կողմ քվեարկեցին ավագանու նիստին ներկա բոլոր 12 անդամները:

Որոշվեց – 1. Հայաստանի Հանապետության Արմավիրի մարզի Արաքս համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 29-ի «Արմավիրի մարզի Արաքս համայնքի Ապագա գյուղում գտնվող «ԿԱԹ ԱՌ» ՍՊԸ-ին պատկանող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխելու մասին» N 87-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

Որոշման նախաբանի «Արմեն Պետրոսյանի» բառերը փոխարինել «Արմեն Մելքոնյանի» բառերով:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ**

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ **Վ.ՎԱՐԴԱՆՅԱՆ**